

Սարինոս, որ ներկայ գտնուած է Նիկիոյ ժողովին: Ասկաղոնի բարգաւաճումը երկար տեւած է և առաջին պատմագիրները կոչած են զայն «Սիւրբիոյ խօսեցեալը»: Բայց է. դարէն վերջ, քրիստոնէութիւն չէ մնացած հոն: Սաչակիրները շատ դժուարութիւն ունեցան Ասկաղոնի տիրելու համար եւ չյաջողեցան: 1270 ին էր որ Պիպարս Պընտըքտար հիմնովին կործանեց քաղաքը:

Ասկաղոնի աւերակներուն մէջ նշանաւոր են երեք եկեղեցիներու աւերակները, ինչպէս նաև թատրոնի մը եւ ուրիշ կարևոր շէնքերու աւերակները: Քաղաքին կեդրոնը գտնուող եկեղեցիին մէկ կողմը 10 մ. տրամագիծով ծակ մը շինուած է և կը կոչուի ջրհոր Աբրահամու Հորանեցոյ: Քաղաքին արևելեան կողմը գտնուած ուրիշ եկեղեցի մը՝ հեթանոսական մեհեան մը եղած է ժամանակին, և փոխարկուած է մզկիթի. ասիկա կը հաստատուի 1854 ին Lady Stenhopeի կողմէ կատարուած պեղումներէն: Երրորդ եկեղեցին՝ քաղաքին հիւսիսային արևմուտքը, պահած է չորս մարմարէ սիւներ: Այն երեք եզրպտացի նահատակները որոնց անունները Անտոնինոս չէ պահած և որոնք Ասկաղոնի մէջ կը տօնախմբուէին, Եւսեբիոս նկարագրելով անոնց նահատակութիւնը կուտայ անունները, որոնք են Արես, Պրովիոս և Եղիս (O. C. M. էջ 217): Ասկաղոն նշանաւոր եղած է իր այգիներով և պարտէզներով (Bar. gd. էջ 506-507):

Քաղա (եբբ. Ազզահ, արբ. Կազզահ) Աստուածաշունչէն յիշատակուած հնագոյն քաղաքներէն մին է: Ծննդոց գիրքը անոր մասին կը խօսի Քանանու երկրին սահմաններուն վերաբերութեամբ և կը հասկցուի թէ Խեացիները կը տիրէին հոն: Քաղաքը ծովէն 3.5 քմ.